



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էր՝ Դավիթ Վանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Սուսաննա Ալեքսանովա, Ռադիկ Բենյամինով, Տոմա Իվանովա, Արտաշես Լալայան,  
Վալոդյա Խոջայան, Սուրեն Միխայլով, Արտյոմ Յակոբով, Զաիր Նադոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ֆելիքս Միրզոբեյը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նելլի Հարությունյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՆԵՎ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ համայնքի ավագանու 2025թվականի հունվարի 15-ի N 01 հերթական նիստի օրակարգը՝

1) Արգնի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

2) Համայնքի ղեկավարի հաղորդումը 2024թվականի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարողականի մասին :

3) Քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 01)

### ԼՍԵՑԻՆ

#### **ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐՁՈՒՄ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի պահանջների.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արզնի համայնքի 2025թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.

2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 02)

### ԼՍԵՑԻՆ

#### **ԱՐՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐՁՈՒՄ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների.

Համայնքի ավագանին որոշում է՝



1.Արգնի համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման մասին ընդունելի գիտություն՝ համաձայն հավելվածի:  
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 03)

### ԼՍԵՑԻՆ

**ՔԱՂԱՔԱՅՈՒ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈՒՎ)

Համաձայն հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 42-րդ կետերի և հիմք ընդունելով Էդգար Ժորայի Մնացականյանի դիմումը.

Համայնքի ավագանին որոշում է .

1. Արգնի համայնքի վարչական տարածքում գտնվող, Էդգար Ժորայի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող 07-016 -0304-0044 կադաստրային ծածկագրով, 0.10017 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, իսկ գործառնական նշանակությունը համարել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:
- 2.Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 04)

Ավագանու անդամներ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵԲՍԱՆՈՎԱ

ՌԱԴԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՈՎ

ՏՈՄԱ ԻՎԱՆՈՎԱ

ԱՐՏԱՇԵՍ ԼԱԼԱՅԱՆ

ՎԱԼՈՂՅԱ ԽՈՋԱՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՄԻԽԱՅԼՈՎ

ԱՐՏՅՈՄ ՅԱԿՈԻԲՈՎ

ԶԱԻԼ ՆԱԴՈՅԱՆ

*[Handwritten signatures in blue ink, corresponding to the names listed on the left]*

Համայնքի ղեկավար

ՖԵԼԻԲՍ ՄԻՐՋՈՆԵՎ



Եհսարն արձանագրեց՝ Նելլի Հարությունյանը